• Իրականացվել են հարակից տեղական համայնքների իրազեկության բարձրացման միջոցառումներ (Սարամեջ, Լեռնանցք և Կողբ համայնքներում):

• Իրականացվել են դաշտային այցեր պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համար՝ լրատվական միջոցների մասնակցությամբ:

• «Հայանտառ» ՊՈԱԿ-ին տրամադրվել է տեխնիկական աջակցություն:

Մինչև ծրագրի ավարտը կշարունակվեն դաշտային աշխատանքները, իրազեկության բարձրացման, հզորությունների ստեղծման և կրթական գործողությունները, հրատարակությունները և այլն:

Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

ՀՀ, Երևան 0019, Պռոշյան 11
Հեռ/Ֆաքս՝ +374 (10) 58 89 83, 54 61 56
էլ. փոստ՝ office_am@wwfcaucasus.org
Ինտերնետային կայք՝ www.panda.org/armenia

Լուսանկարներ՝ © WWF-Հայաստան

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Սույն բրոշյուրը պատրաստվել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից Եվրոպական միության աջակցությամբ: Բրոշյուրում զետեղված բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

WWF
LEAFLET
2014

ԱՆՏԱՌԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԾՐԱԳԻՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հայաստան

«Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» տարածաշրջանային ծրագիր:

- Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից
- Իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կողմից Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում WWF-Գերմանիայի ղեկավարությամբ
- Հայաստանում իրականացվում է WWF-Հայաստանի կողմից
- Ծրագրի տևողությունը՝ 2011–2015թթ.

Ընդհանուր նպատակ

Բարձրացնել Հարավային Կովկասի անտառային էկոհամակարգերի դիմադրողականությունը կլիմայի փոփոխության նկատմամբ և բարելավել կենսաբազմազանությունն ու տեղական բնակչության կենսամիջոցները:

Հատուկ նպատակ

Անտառկառավարող մարմնի համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի մշակվեն և իրականացվեն ռազմավարություններ միատարր անտառտնկարկները տրանսֆորմացիայի ենթարկելու ուղղությամբ՝ արդյունքում կլիմայի փոփոխության նկատմամբ ավելի կայուն և «բնականին մոտ» տարածքներ ունենալու համար:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ծրագրի 2 պիլոտային տարածքներում («Սպիտակ» և «Նոյեմբերյան» պիլոտային տարածքներ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի և Նոյեմբերյանի անտառտնտեսություններում, ընդհանուր 150 հա մակերեսով) իրականացվել է անտառի տրանսֆորմացիա (ցանկապատում, ցանքս և տնկում, խնամք): Օգտագործվել է տեղական տնկանյութ, աշխատանքում ընդգրկվել է տեղական բնակչությունը:

- Իրականացվել են թեմատիկ ուսուցումներ անտառային ոլորտի աշխատողների համար և կրթական միջոցառումներ համալսարանների ուսանողների և դասախոսների համար: